



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

18th November 2018

Bulletin No 48/18

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-11

Պօղոս եւ Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառաները՝ Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն, որ Փիլիպպեի կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւագներով. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէն՝ ձեզմէ ունեցած բոլոր յիշատակներու համար, ամէն ատեն՝ ամէն աղերսանքիս մէջ: Ուրախութեամբ կ'աղերսեմ ձեր բոլորին համար, քանի որ հաղորդակից եղաք աւետարանին՝ առաջին օրէն մինչեւ հիմա. այս մասին համոզուած եմ թէ ա՛ն որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ, պիտի աւարտէ մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը: Իրաւացի ալ է ինծի այսպէս մտածել ձեր բոլորին մասին, քանի որ ձեզ ունիմ իմ սիրտիս մէջ՝, ու դուք բոլորդ հաղորդակցեցաք ինծի եղած շնորհքին՝ թէ՛ իմ կապերուս, թէ՛ ալ աւետարանին ջատագովութեան եւ հաստատութեան մէջ: Որովհետեւ Աստուած վկայ է թէ ո՛րքան կարօտեցած եմ ձեզ բոլորդ՝ Քրիստոս Յիսուսի գութով, ու սա՛յէս կ'աղօթեմ՝ որ ձեր սերը հետզհետէ աւելի առատանայ գիտակցութեամբ եւ ամբողջ դատողութեամբ, որպէսզի դուք զատորոշէք տարբեր բաները՝ անկեղծ եւ անսայթաք ըլլալու համար մինչեւ Քրիստոսի օրը, լեցուած արդարութեան պտուղներով Յիսուս Քրիստոսի միջոցով՝ Աստուծոյ փառքին ու գովութեան համար:



Paul Writes to Philippians

The Epistle of St Paul to the Philippians 1:1-11

Paul and Timothy, servants of Christ Jesus,

To all God's holy people in Christ Jesus at Philippi, together with the overseers and deacons ^a:

Grace and peace to you from God our Father and the Lord Jesus Christ.

Thanksgiving and Prayer

I thank my God every time I remember you. In all my prayers for all of you, I always pray with joy because of your partnership in the gospel from the first day until now, being confident of this, that he who began a good work in you will carry it on to completion until the day of Christ Jesus.

It is right for me to feel this way about all of you, since I have you in my heart and, whether I am in chains or defending and confirming the gospel, all of you share in God's grace with me. God can testify how I long for all of you with the affection of Christ Jesus.

And this is my prayer: that your love may abound more and more in knowledge and depth of insight, so that you may be able to discern what is best and may be pure and blameless for the day of Christ, filled with the fruit of righteousness that comes through Jesus Christ—to the glory and praise of God.

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 9:44-50

Բոլորը կ'ապշեին Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ: Մինչ բոլորն ալ կը սքանչանային Յիսուսի բոլոր ըրածներուն վրայ, ան ըսաւ իր աշակերտներուն. «Դուք այս խօսքերը ձեր մի տքը պահեցէ՛ք», որովհետեւ մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Բայց անոնք չէին հասկնար այս խօսքը, եւ անոնցմէ ծածկուած էր՝ որպէսզի չըմբռնեն. ու կը վախնային հարցնել իրեն այդ խօսքին մասին:

Մտածում մըն ալ ծագեցաւ անոնց մէջ, թէ արդեօք ո՛վ է մեծագոյնը իրենց մէջ: Յիսուս ըմբռնելով անոնց սիրտին մտածումը՝ առաւ մանուկ մը, կայնեցուց զայն իր քով, ու ըսաւ անոնց. «Ո՛վ որ կ'ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զի՛ս կ'ընդունի, եւ ո՛վ որ զիս կ'ընդունի՝ զիս դրկո՛ղը կ'ընդունի. որովհետեւ ա՛ն որ ամենէն պզտիկն է ձեր բոլորին մէջ, անիկա՛ պիտի ըլլայ մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապե՛տ, մէկը տեսանք որ դէւեր կը հանէր քու անունովդ, եւ արգիլեցինք զայն՝ քանի որ մեզի չի հետեւիր»: Յիսուս ըսաւ անոր. «Մի՛ արգիլէք, որովհետեւ ա՛ն որ մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 9:44-50

Jesus Predicts His Death a Second Time

While everyone was marveling at all that Jesus did, he said to his disciples, **"Listen carefully to what I am about to tell you: The Son of Man is going to be delivered into the hands of men."** But they did not understand what this meant. It was hidden from them, so that they did not grasp it, and they were afraid to ask him about it.

An argument started among the disciples as to which of them would be the greatest. Jesus, knowing their thoughts, took a little child and had him stand beside him. Then he said to them, **"Whoever welcomes this little child in my name welcomes me; and whoever welcomes me welcomes the one who sent me. For it is the one who is least among you all who is the greatest."**

"Master," said John, "we saw someone driving out demons in your name and we tried to stop him, because he is not one of us."

"Do not stop him," Jesus said, **"for whoever is not against you is for you."**

մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՈՎ ՈՐ ՁԵՐ ՄԷՋ ՓՈՔՐԱԳՈՅՆՆ Է, ՆԱ Է ՄԵԾ (Ղուկ. 9.48).

Այս խօսքը Տէր Յիսուս ասաց Իր աշակերտներին, երբ տեսաւ, որ նրանք վիճում են, թէ իրենցից մեծն ով է: Քրիստոս սա ասաց՝ մի մանկան գրկելով եւ մանկան պէս լինելու պատգամ տալով: Արդեօք միայն Տիրոջ աշակերտներն էին վիճում առաջինը, մեծը, փառաւորը լինելու համար: Փաստ է, որ այս մրցավազքը եղել է, կայ եւ կը շարունակուի բոլոր սերունդների մէջ մինչեւ Քրիստոսի Բ Գալուստ:

Յետաքրքիր է, որ Քրիստոս դաս է տալիս մանկան միջոցով: Փառասիրութեան կիրքը եւ փոքրիկները: Ի՞նչն է կապը.

Յեշտ է նոր ծիլը, եթէ չար է, արմատախիլ անել, որ չգօրանայ: Այդպէս էլ մարդու հոգուց չար սերմերը, յակումները, սովորոյթները յեշտ է դուրս վանել, երբ դեռ նորատունկ է: Երեխաների դէպքում էլ մանկուց արմատախիլ պէտք է արուեն չար յակումները եւ խրախուսուեն բարի մտածումներն ու գործերը: Երբ մարդ իր առաջին քայլերն է անում հաւատքի ճամփի վրայ, նորադարձ է, մանուկի պէս է եւ աստիճանաբար է աճելու հոգեւոր կեանքի մէջ:

Մանկան պէս են այն մարդիկ, ովքեր Աստուծոյ դէմ չեն հպարտանում իրենց գիտութեամբ, այլ իբրեւ աշակերտ են կանգնում մեծ Վարդապետի առջեւ: Կարելոր չէ, թէ քանի համալսարան ենք աւարտել, որքան ենք յաջողել մեր գործի մէջ, Տիրոջ առաջ խոնարհութիւնն է իրականում մեզ բարձրացնում: Քրիստոսի հետ լինելու փորձառութիւնն է, որ յասունացնում է: Երբ խոնարհեցնում ենք մեր անձերը, Քրիստոս է բնակւում մեր մէջ: Երբ մեր կամաւոր փոքրութիւնը պատճառ է դառնում, որ Քրիստոսով մեծ լինենք մարդկանց մէջ, դրանից յետոյ էլ խոնարհ պիտի մնանք Աստուծոյ առաջ՝ գիտակցելով, որ առանց Տիրոջ ոչինչ չէինք կարող:

"Ով որ այս մանկանն ընդունի Իմ անունով, Ինձ է ընդունում", -ասում է Քրիստոս: Ոչ միայն մանկան, այլեւ ամեն մարդու միջոցով կարող է Քրիստոս գալ: Մենք կարող ենք Տիրոջն ընդունած

3: List of the Feasts celebrated in the Armenian church

Միջենք մեր հայրերի խօսքը. "Հիւրն Աստծունն է", քանի որ այդ կերպ հրեշտակներ այցելեցին Աբրահամին, Ղովտին ու շատերին: Տեր Յիսուս է այցելում բոլոր նրանց, ովքեր Տիրոջ անունով են ընդունում մարդկանց: Ինչպես յաճախ ողորմութեան ժամանակ էր ասում՝ ողորմացէ՛ք յանուն Քրիստոսի:

Ամբողջը կարող ենք հանրագումարի բերել տեղունական մի սահմանումով. "Ով իր անձը բարձրացնում է, կը խոնարհուի. եւ ով խոնարհեցնում է իր անձը, կը բարձրանայ" (Մատթ. 23.), եւ այն ժամանակ Քրիստոսով բարձրացած մարդը զօրաւոր կը լինի իր թե՛ խօսքի, թե՛ գործի մեջ, կը փառաւորուի թե՛ մարդկանցից եւ թե՛ Աստծոց: **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

Հիշատակ Ս. Անդրեաս և Ս. Փիլիպպոս առաքյալների

Ս. Անդրեաս առաքյալը, մինչ Հիսուս Քրիստոսին հետևելը, նախապես եղել է Հովհաննես Մկրտչի աշակերտը: Նա Պետրոս առաքյալի եղբայրն ու արհեստակիցն էր: Փրկչի համբարձումից և Ս. Հոգու էջփից հետո Անդրեաս առաքյալը քարոզել է Հյուսիսային Հունաստանում և սկյութների երկրում: Նահատակվել է Պատրաս քաղաքում:

Ս. Փիլիպպոս առաքյալը Հրեաստանի Բեթսայիդայից էր, Պետրոս առաքյալի հայրենակիցը: Հավանաբար նա էլ է նախապես եղել Հովհաննես Մկրտչի աշակերտը: Քարոզել է Փոքր Ասիայում և նահատակվել Հերապոլիս քաղաքում՝ խաչելությամբ:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Անդրեաս և Ս. Փիլիպպոս առաքյալների հիշատակը տոնում է Ս. Խաչի 9-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Commemoration of the Apostles Andrew and Phillip

Before becoming Christ's disciple Apostle Andrew has been the disciple of St. John the Baptist. He was the brother of the Apostle Peter and was a fisherman. After the Ascension of the Lord and the Descent of the Holy Spirit Apostle Andrew has preached in Northern Greece and in Scythia.

Apostle Phillip was from the town Bethsaida. Perhaps he also has been the disciple of St. John the Baptist. He has preached in Asia Minor. Apostle Philip has been martyred and crucified in the town Heliople.

Անհավատ մարդը (առակ)

Աստծուն չհավատացող մի մարդ զբոսնում էր անդունդի եզրով: Հանկարծ սայթաքեց ու վայր ընկավ: Ընկնելու ընթացքում նրան հաջողվեց բռնվել փոքր ծառի ճյուղից, որն աճել էր ժայռի խոռոչում: Գլուխը կախված և օրորվելով սառը քամուց՝ նա հասկացավ իր անելանելի վիճակը. անդունդի ներքևում մամռակալած գլաքարերն էին, իսկ վեր բարձրանալու հնարավորություն չկար: Գլուխը բռնած նրա ձեռքերը թուլանում էին:

-Այժմ միայն Աստված կարող է ինձ փրկել, -մտածեց նա: -Ես երբեք Աստծուն չեմ հավատացել, բայց հավանաբար սխալվել եմ: Ի՞նչ եմ կորցնելու:

Նա կանչեց.

-Աստված, եթե դու գոյություն ունես, փրկի՞՞ր ինձ և ես կհավատամ քեզ:

Մակայն պատասխան չկար: Նա նորից կանչեց.

-Խնդրո՞ւմ եմ քեզ Աստված: Ես երբեք չեմ հավատացել քեզ, բայց եթե դու ինձ հիմա փրկես, ես այս պահից իսկ կհավատամ քեզ:

-Ո՛հ, չես հավատա,- հանկարծ ամպերից հնչեց Բարձրալի ձայնը:

Մարդն ականատես զարմացավ, որ քիչ էր մնում բաց թողներ ճյուղը:

-Խնդրում եմ քեզ Աստված, -հազիվհազ շարունակեց մարդը, -դու սխալվում ես: Իրականում ես մտածում եմ, որ կհավատամ քեզ:

-Ո՛չ, չես հավատա, -կրկին որոտաց Աստծո ձայնը:

Մարդն աղաչում, պաղատում ու համոզում էր: Վերջապես Աստված ասաց.

-Լավ, ես կփրկեմ քեզ, բայց դրա համար դու պետք է բաց թողնես ճյուղը:

— Ի՞նչ, բաց թողնե՛լ ճուղը, -ապշահար բազականչեց մարդը: -Կարծում ես՝ ես խելագա՞ր եմ:

Ռուսերենից թարգմանեց Հովհաննես սարկապազ Ասատրյանը

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mr & Mrs Martin and Matilda Megerdichian, Mr & Mrs Rene and Artine` Megerdichian and Family for the soul of their Father, Grandfather and Great-Grandfather the late **TIGRAN HOVSEPIAN (ՏԻԳՐԱՆ ՅՈՎՍԵՓԵԱՆ)** on the 20th anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **HOVSEPIAN** and **MEGERDICHIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգևոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

I wish to arrange a standing order/make a donation £to St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms available from Parish Council.